



Գլխավոր էջ	Գատարանի մասին	Օրենսդրություն	Կանոնադրություն	Կանոնակարգ	Համաձայնագիր Վերապահում	Արբիտրներ	Հետադարձ կապ	Հղումներ
------------	----------------	----------------	-----------------	------------	-------------------------	-----------	--------------	----------

**ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Ընդհանուր դրույթներ
2. Փաղտնիությունը
3. Փաստաթղթերի ներկայացման կարգը
4. Փաստաթղթերի առաքումը և հանձնումը
5. Գործը լսելու լեզուն
6. Գործի քննության ժամկետը
7. Կիրառելի իրավունքը
8. Արբիտրաժային վարույթի սկիզբը
9. Հայցադիմումի ձևը և բովանդակությունը
10. Գործի նախապատրաստումը արբիտրաժային վարույթին
11. Հայցի հիմքը կամ առարկան փոխելը, հայցային պահանջների չափը փոփոխելը
12. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը
13. Արբիտրի, փորձագետի և թարգմանչի բացարկը
14. Արբիտրի իրավասությունների դադարում
15. Արբիտրաժային տրիբունալի փոփոխություն
16. Գործի վարույթը
17. Բանավոր քննություն
18. Բանավոր քննության նիստի արձանագրումը
19. Բանավոր քննության արձանագրությունը
20. Կողմերի մասնակցությունը
21. Հայցի ապահովման միջոցները
22. Գործի վարույթը գրավոր նյութերի հիման վրա
23. Ապացույցները
24. Երրորդ անձանց մասնակցությունը
25. Քննության հետաձգումը և վարույթի կասեցումը
26. Վերջնական արբիտրաժային վճիռ
27. Վճռի կայացումը
28. Վճռի հրապարակումը
29. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը
30. Վճռի ուղղումը, պարզաբանումը և լրացումը
31. Հաշտության համաձայնություն
32. Վճռի կատարումը
33. Վարույթի ավարտը առանց վճռի կայացման

Հավելված. [Կ Ա Ր Գ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ](#)

**1. Ընդհանուր դրույթներ**

Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին (այսուհետ՝ Պալատ) կից մշտապես գործող Արբիտրաժային դատարան՝ հիմնարկը (այսուհետ՝ Արբիտրաժային դատարան) ինքնուրույն, մշտապես գործող, հիմնարկի կարգավիճակով ստեղծված, սույն կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 1.2 կետում նշված նպատակների իրականացման համար ստեղծված Արբիտրաժային դատարան է, որը գործում է՝ Առևտրային արբիտրաժի մասին՝ ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), Կանոնակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան: Արբիտրաժային դատարանը չի լուծում վեճեր: Նրա գործունեության նպատակները ներառում են, մասնավորապես՝ նպաստել վեճերը Կանոնակարգին համապատասխան լուծելուն, տեղեկատվություն տրամադրել արբիտրաժի անցկացման և կիրառելի

ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ: Արբիտրաժային դատարանին կարող է դիմել արբիտրաժային համաձայնության կողմ հանդիսացող ցանկացած անձ: Արբիտրաժային դատարանը բավարարում է արբիտրաժային վարույթ սկսելու հայցվորի խնդրանքն այն դեպքում, երբ կողմերի միջև առկա է գրավոր համաձայնություն տվյալ վեճն Արբիտրաժային դատարանին հանձնելու մասին և հայցը ներկայացվում է Կանոնակարգով սահմանված պայմանների պահպանմամբ: Արբիտրաժային տրիբունալը վեճը քննում է Օրենքով և Կանոնակարգով սահմանված կարգով: Կողմերի համաձայնությամբ, չկարգավորված հարցերը քննելիս արբիտրաժային տրիբունալը հետևելով Օրենքի դրույթներին, վարում է քննությունը այնպիսի եղանակով, որը նա գտնում է նպատակահարմար՝ պահպանելով հավասար վերաբերմունք կողմերի նկատմամբ և հնարավորություն տալով կողմերից յուրաքանչյուրին հավասարապես պաշտպանելու իրենց շահերը: Տվյալ վեճը քննելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցը վերջինիս կողմից որոշվում է օրենքով և միջազգային իրավական նորմերով սահմանված կարգով: Կանոնակարգով Արբիտրաժային դատարանին վերապահված գործառույթները, համաձայն Արբիտրաժային դատարանի կանոնադրության 4.7 կետի 4.7.5 ենթակետի, Արբիտրաժային դատարանի անուկից իրականացնում է Արբիտրաժային դատարանի նախագահը: Արբիտրաժային դատարանի գտնվելու վայրը և լուսմներն անցկացնելու վայրը թաղաք Երևանն է: Արբիտրաժային տրիբունալը, անհրաժեշտության դեպքում, կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է լուսմներն անցկացնել այլ վայրում: Կողմերի ցանկությամբ լուսմներն անցկացնան այլ վայր սահմանելու դեպքում լուսմների վայրի տեղափոխման հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերը կատարվում, իսկ այնուհետև բաշխվում են կողմերի միջև Կանոնակարգին համապատասխան:

## **2. Գաղտնիությունը**

Արբիտրաժային դատարանը, արբիտրները և Արբիտրաժային դատարանի նախագահն ու գլխավոր քարտուղարը պարտավոր են չհրապարակել Արբիտրաժային դատարանին հանձնված վեճերի մասին իրենց հայտնի դարձած որևէ տեղեկություն, որոնց հրապարակումը կարող է վնաս հասցնել շահագրգիռ կողմին:

## **3. Փաստաթղթերի ներկայացման կարգը**

Բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են արբիտրաժային վարույթին, կողմերը պետք է ներկայացնեն Արբիտրաժային դատարանին հինգ օրինակից, իսկ այն դեպքում, երբ վեճը քննվելու է մեկ արբիտրի կողմից՝ երեք օրինակից: Արբիտրաժային դատարանին ներկայացվող բոլոր փաստաթղթերը, բացի գրավոր ապացույցներից, ներկայացվում են արբիտրաժի համար կողմերի ընտրած լեզվով: Արբիտրաժային տրիբունալն իր հայեցողությամբ կամ կողմերից մեկի խնդրանքով կարող է պահանջել մյուս կողմից գրավոր ապացույցները ներկայացնել թարգմանված՝ արբիտրաժի համար կողմերի պայմանավորված լեզվով:

## **4. Փաստաթղթերի առաքումը և հանձնումը**

Արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարը գործի հետ կապված բոլոր փաստաթղթերն առաքում է կողմերին և մինչ այդ պահը նշանակված արբիտրներին: Դրանք ուղարկվում են կողմերի նշած հասցեներով: Հասցեի փոփոխության դեպքում կողմերը պարտավոր են այդ մասին անմիջապես հաղորդել Արբիտրաժային դատարանին: Հայցադիմումները, հայցի վերաբերյալ բացատրությունները, հայցադիմումի պատասխանները, ծանուցագրերը, արբիտրաժային վճիռները և որոշումները առաքվում են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ: Այլ փաստաթղթերը կարող են փոխանցվել նաև հեռագրով, ֆաքսով՝ կողմերի նշած հեռախոսահամարներով, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով, որոնք թույլ են տալիս որոշելու առաքողի և ստացողի ինքնությունը: Վերը նշված բոլոր փաստաթղթերը կարող են նաև փոխանցվել կամ հանձնվել առձեռն, ինչը պետք է հավաստվի ստացման վերաբերյալ հասցեատիրոջ բնօրինակ մակագրությամբ: Կողմի՝ Արբիտրաժային դատարանին ներկայացրած բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում Արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարի կողմից պետք է փոխանցվեն մյուս կողմին: Կողմերին նաև պետք է փոխանցվեն փորձագետների ցանկացած եզրակացություններ կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ փաստաթղթեր, որոնք ներկայացվել են Արբիտրաժային դատարանին:

## **5. Գործը լսելու լեզուն**

Գործը լսվում է հայերեն լեզվով: Կողմերի համաձայնության առկայության դեպքում արբիտրաժային տրիբունալը գործը լսում է նաև օտար լեզվով, պայմանով սակայն, եթե Կանոնակարգով սահմանված կարգով ընտրված արբիտրները տիրապետում են արբիտրաժային համաձայնությամբ ընտրված լեզվին: Եթե կողմը չի տիրապետում գործը լսելու լեզվին, ապա արբիտրաժային տրիբունալը կողմի խնդրանքով և վերջինիս հաշվին կարող է ապահովել նրան թարգմանչական ծառայություններով:

## **6. Գործի քննության ժամկետը**

Արբիտրաժային տրիբունալը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի գործի քննությունն ավարտվի արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո քառամսյա ժամկետում: Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալը սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է երկարաձգել Կանոնակարգի 6.1 կետում նշված ժամկետը:

## **7. Կիրառելի իրավունքը**

Արբիտրաժային տրիբունալը վեճերը քննում է կողմերի համաձայնությամբ ընտրված նյութական իրավունքի նորմերի կիրառմամբ, կամ

կողմերի համաձայնության դեպքում, անկախ կիրառելի իրավունքից՝ ղեկավարվելով արդարության ընդհանուր սկզբունքներով, սակայն, ամեն դեպքում, չհակասելով Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

#### **8. Արբիտրաժային վարույթի սկիզբը**

Տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը:

#### **9. Հայցադիմումի ձևը և բովանդակությունը**

Հայցադիմումը պետք է պարունակի. Արբիտրաժային դատարանի լրիվ անվանումը, հղում արբիտրաժային համաձայնությանը, որի բնօրինակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը պետք է ներկայացվի հայցադիմումին կից, Կողմերի և նրանց ներկայացուցիչների անունները, անվանումները, փոստային հասցեները, ինչպես նաև հեռախոսային և ֆաքսիմիլային կապի համարները և էլ. փոստի հասցեները (եթե վերջիններս առկա են), փաստական հանգամանքների շարադրումը, վեճի հակիրճ նկարագիրը, հայցվորի պահանջների նկարագրությունը և իրավական դրույթներին հղումը, որոնց հիման վրա հայցվորը հիմնավորում է իր հայցապահանջները, ինչպես նաև հղումներ այն ապացույցներին, որոնք հաստատում են այդ հանգամանքները, հայցագիրը, արբիտրի անունը և ազգանունը, որին ընտրել է հայցվորը կամ խնդրանք այն մասին, որ արբիտրին նշանակի Արբիտրաժային դատարանը, հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, Հայցադիմումում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները: Պայմանագրի կնքելուն հարկադրելու մասին հայցադիմումին պետք է կցվի նաև համապատասխան պայմանագրի նախագիծը: Հայցադիմումին կից ներկայացվում է նաև Կանոնակարգով սահմանված կարգով հաշվարկված գործավարության և արբիտրաժային վճարների վճարումը հավաստող փաստաթղթերը: Գույքային պահանջների մասին հայցադիմումներին կից պետք է ներկայացվի այդ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ մասնագիտացված (կամ օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզավորված) անձի եզրակացությունը: Հայցադիմումը պետք է ստորագրված լինի հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից՝ կից ներկայացնելով ներկայացուցչի լիազորագիրը: Հայցագիրը որոշվում է. Գումարի բնագանձման հայցերի դեպքում՝ պահանջվող գումարով, Գույքային պահանջով հայցերի դեպքում՝ բնագանձվող գույքի շուկայական արժեքով, Իրավահարաբերության ճանաչման, փոփոխման կամ դադարման հայցերի դեպքում՝ հայցի ներկայացման պահին իրավահարաբերության առարկայի արժեքով, Որոշակի գործողություն կատարելու կամ որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու պահանջով հայցերի դեպքում՝ հայցվորի գույքային շահերի վերաբերյալ առկա տվյալների հիման վրա: Հայցվորը պարտավոր է հայցադիմումում ողջամիտ հիմնավորմամբ նշել հայցագիրը նաև այն դեպքերում, երբ իր հայցապահանջը չի պարունակում կամ մասամբ է պարունակում գումարային պահանջ: Մի քանի հայցային պահանջ պարունակող հայցադիմումներում յուրաքանչյուր պահանջի համար հայցագիրը պետք է որոշված լինի առանձին: Այս դեպքում հայցագիրը ձևավորվում է բոլոր պահանջների հայցագրերի հանրագումարով: Եթե հայցվորը չի որոշել կամ սխալ է որոշել հայցագիրը, Արբիտրաժային դատարանն իր նախաձեռնությամբ կամ պատասխանողի պահանջով որոշում է հայցագիրը: Հաստատելով, որ հայցադիմումը ներկայացվել է Արբիտրաժային դատարանին Կանոնակարգի 9-րդ գլխի պահանջների խախտմամբ, Արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարն առաջարկում է հայցվորին ողջամիտ ժամկետում վերացնելու հայցադիմումի մեջ տեղ գտած թերությունները: Բացառությամբ Կանոնակարգի 9.1.4 կետի պահանջների, Կանոնակարգի 9-րդ գլխի մյուս բոլոր դրույթների պահանջների խախտմամբ ներկայացված հայցադիմումները չեն ընդունվում: Եթե հայցվորը պնդում է Կանոնակարգի 9.1.4 կետի պահանջների խախտումներով ներկայացված հայցադիմումի շրջանակներում քննության իրականացումը, ապա արբիտրաժային վարույթը սկսվում է տվյալ հայցադիմումի հիման վրա: Արբիտրաժային ծախսերը ներառում են. արբիտրաժային վճարը, Արբիտրաժային դատարանի գործավարության վճարը, գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերը: Արբիտրաժային դատարանը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը կարող է արբիտրաժային վարույթի ընթացքում որոշում կայացնել լրացուցիչ ծախսերը հոգալու համար հավելյալ գումարների վճարման վերաբերյալ, որը նույնպես ենթակա է վճարման հայցվորի կողմից, իսկ եթե այդ ծախսերի կատարման անհրաժեշտությունն առաջացել են պատասխանողի կողմից կատարված դատավարական գործողությունների հետևանքով, ապա՝ պատասխանողի կողմից: Արբիտրաժային լրացուցիչ գործողությունները, որոնցով պայմանավորված է սույն կետում նշված վճարի անհրաժեշտությունը, չեն կատարվի մինչև դրա վճարումը, իսկ արբիտրաժային վարույթը կշարունակվի առանց նշված գործողությունների իրականացման: Արբիտրաժային ծախսերի չափը, վճարման կարգը, ծախսերի բաշխումը կողմերի միջև, ինչպես նաև արբիտրաժային վարույթի այլ ծախսերի վճարման կարգը, սահմանվում է Կանոնակարգի թիվ 1 հավելված հանդիսացող Արբիտրաժային ծախսերի և հոնորարների մասին՝ կարգով, որը հանդիսանում է Կանոնակարգի անբաժանելի մասը:

#### **10. Գործի նախապարտաստումը արբիտրաժային վարույթին**

Արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարն Օրենքով և Կանոնակարգով սահմանված կարգով ծանուցում է պատասխանողին հայցի հարուցման մասին և ուղարկում է նրան հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ առաջարկելով երկշաբաթյա ժամկետում Արբիտրաժային դատարանն ուղարկել հայցադիմումի պատասխան՝ շարադրելով հայցվորի կողմից գործը Արբիտրաժային դատարանին հանձնելու վերաբերյալ իր տեսակետը և/կամ ներկայացված պահանջների վերաբերյալ իր դիրքորոշումը: Հայցադիմումի պատասխանում պատասխանողը պարտավոր է հանգամանորեն շարադրել, թե փաստական և իրավական հանգամանքներից որոնք է ընդունում և որոնց դեմ է առարկում և ինչ հիմքերով է դրանց դեմ առարկում: Եթե պատասխանողը ցանկանում է առարկություններ ներկայացնել արբիտրաժային համաձայնության վավերականության կամ կիրառելի լինելու հանգամանքի վերաբերյալ, ապա վերջինս պարտավոր է այդ մասին շարադրել Արբիտրաժային դատարանին ուղղված իր պատասխանի մեջ՝ միաժամանակ նշելով հիմնավորումները: Հայցադիմումի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով պատասխանողը հիմնավորում է իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Հայցադիմումի պատասխանի մեջ պատասխանողը պարտավոր է նշել իր կողմից ընտրված արբիտրի անունը, ազգանունը

կամ խնդրել, որպեսզի արբիտրին իր փոխարեն նշանակի Արբիտրաժային դատարանը: Հայցադիմումի պատասխանի փոխարեն պատասխանողը կարող է Արբիտրաժային դատարան ներկայացնել հակընդդեմ հայցադիմում: Հակընդդեմ հայցադիմումը պետք է ներկայացվի հայցադիմումի ներկայացման համար Կանոնակարգով սահմանված կարգով: Եթե պատասխանողի կողմից ներկայացվում է հակընդդեմ հայցադիմում, ապա հակընդդեմ հայցադիմումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում հայցվորը արբիտրաժային տրիբունալին է ներկայացնում հակընդդեմ հայցադիմումի պատասխան, որը պետք է ներառի առարկություններ հակընդդեմ հայցապահանջների դեմ՝ հայցային պահանջների դեմ առարկություններ բերելու համար նախատեսված կարգով: Հակընդդեմ հայցադիմումի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով հայցվորը հիմնավորում է իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Սահմանված ժամկետներում կողմերի կողմից համապատասխան դիրքորոշում չներկայացնելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ Արբիտրաժային դատարանի կողմից վարույթը Կանոնակարգի համաձայն շարունակելու համար:

#### **11. Հայցի հիմքը կամ առարկան փոխելը, հայցային պահանջների չափը փոփոխելը**

Հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի առարկան կամ հիմքերը, նվազեցնելու կամ ավելացնելու հայցային պահանջների չափը մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործի քննությունն ավարտված հայտարարելը: Հայցային պահանջներն ավելացնելու դեպքում հայցվորը պարտավոր է հայցային պահանջներն ավելացնելու վերաբերյալ դիմումին կից ներկայացնել հայցապահանջների ավելացված մասին համապատասխանող արբիտրաժային վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը չներկայացնելու դեպքում դիմումը վերադարձվում է հայցվորին և հայցային պահանջները համարվում են չավելացված:

#### **12. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը**

Կողմերի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը կազմավորվում է երեք արբիտրներից, Եթե արբիտրաժային տրիբունալը բաղկացած է մեկից ավելի արբիտրներից, ապա կողմերից յուրաքանչյուրը նշանակում է հավասար քանակի արբիտրներ: Նրանք կարող են նաև խնդրել, որ արբիտրին իրենց փոխարեն նշանակի Արբիտրաժային դատարանը: Եթե Կանոնակարգով սահմանված ժամկետում հայցվորը(ները) կամ պատասխանողը(ները) չեն ներկայացնում արբիտրի թեկնածություն, ապա վերջինների նշանակումը կատարում է Արբիտրաժային դատարանը՝ Արբիտրաժային դատարանի արբիտրների ցուցակից: Եթե գործին մասնակցում են երկու կամ ավելի հայցվորներ կամ պատասխանողներ և գործը պետք է քննվի մեկից ավելի արբիտրների կողմից, ապա հայցվորները և պատասխանողները նշանակում են հավասար թվով արբիտրներ: Եթե հայցվորները կամ պատասխանողները չեն համաձայնվում արբիտրների համատեղ նշանակման հարցում, ապա նրանք փոխարեն արբիտրին նշանակում է Արբիտրաժային դատարանը: Եթե արբիտրաժային տրիբունալը բաղկացած է մեկից ավելի արբիտրներից, ապա արբիտրաժային տրիբունալը նախագահողին նշանակում են ընտրված արբիտրները, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ Արբիտրաժային դատարանը: Եթե գործը վարում է միանձնյա արբիտրը, ապա վերջինիս կողմերն ընտրում են միասին: Նրանք կարող են նաև խնդրել Արբիտրաժային դատարանին իրենց փոխարեն նշանակելու միանձնյա արբիտրին: Միանձնյա արբիտրի ընտրության հարցում կողմերի միջև մեկամսյա ժամկետում համաձայնություն չկայացվելու դեպքում արբիտրների ցուցակից նրան նշանակում է Արբիտրաժային դատարանը:

#### **13. Արբիտրի, փորձագետի և թարգմանչի բացարկը**

Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի բացարկ հայտնելու արբիտրին, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են հարուցում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, մասնավորապես՝ եթե կարելի է ենթադրել, որ նրանք անձամբ ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են վարույթի ելքով: Բացարկ կարելի է հայտնել նաև այն դեպքում, եթե արբիտրը օժտված չէ կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորմանը: Բացարկի մասին կողմերի գրավոր դիմումները, որոնցում շարադրված են բացարկը հիմնավորող հանգամանքները, պետք է ներկայացվեն մեկշաբաթյա ժամկետում, այն բանից հետո, երբ կողմը տեղյակ է եղել արբիտրաժային տրիբունալի ձևավորման մասին, կամ այն բանից հետո, երբ կողմը տեղյակ է եղել այնպիսի հանգամանքների մասին, որոնք բացարկի հիմք կարող են հանդիսանալ: Վերը նշված ժամկետից ուշ բացարկի մասին հայտարարություն անելու դեպքում հայտարարությունը կքննարկվի, եթե ժամկետի ուշացումը եղել է հարգելի պատճառով: Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը չի համաձայնվում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում են արբիտրաժային տրիբունալի մյուս անդամները: Եթե նրանք համաձայնության չեն գալիս կամ եթե բացարկը հայտնվել է միանձնյա արբիտրին, ապա բացարկի հարցը որոշում է Արբիտրաժային դատարանը: Արբիտրն իր հայեցողությամբ կարող է նաև ինքնաբացարկ հայտարարել: Նույն հիմքերով, որոնք նշված են Կանոնակարգի 13.1 կետում, կարող է բացարկ հայտնվել նաև վարույթին մասնակցող փորձագետներին և թարգմանիչներին: Այս դեպքում բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

#### **14. Արբիտրի իրավասությունների դադարում**

Այն դեպքում, երբ արբիտրն իրավաբանորեն (de jure) կամ փաստացի (de facto) ի վիճակի չէ կատարել կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառնություններն առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են՝ ինքնաբացարկ հայտնելով, կամ երբ կողմերը համաձայնվում են նրա լիազորությունների դադարեցման մասին: Այն դեպքերում, երբ առկա են տարաձայնություններ Կանոնակարգի 14.1 կետի հիմքերից որեւէ մեկի վերաբերյալ, արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարան, որի կայացրած դատական ակտը բողոքարկման ենթակա չէ:

#### **15. Արբիտրաժային տրիբունալի փոփոխություն**

Եթե արբիտրին բացարկ է հայտնվել կամ այլ պատճառներով նա չի կարող մասնակցել գործի վարույթին, ապա փոխարինող արբիտրին նշանակում է փոխարինվող արբիտրին նշանակած կողմը, իսկ եթե փոխարինվող արբիտրը նշանակվել է Արբիտրաժային դատարանի կամ մյուս արբիտրների կողմից, ապա համապատասխանաբար Արբիտրաժային դատարանը կամ մյուս արբիտրները: Անհրաժեշտության դեպքում կամ հաշվի առնելով կողմերի կարծիքները փոփոխված արբիտրաժային տրիբունալը կարող է վերանայել արբիտրաժային վարույթի հետ կապված այն հարցերը, որոնք քննարկվել են նախկին բանավոր լուսմների ժամանակ՝ մինչև փոխարինման կատարումը:

#### **16. Գործի վարույթը**

Արբիտրաժային տրիբունալը ստուգում է գործի նախապատրաստման վիճակը արբիտրաժային վարույթին և եթե անհրաժեշտ համարի, ձեռնարկում է լրացուցիչ միջոցներ գործի նախապատրաստման համար, մասնավորապես՝ պահանջում է կողմերից գրավոր բացատրություններ, ապացույցներ և լրացուցիչ այլ փաստաթղթեր: Եթե լրացուցիչ միջոցներ է ձեռնարկվում գործի նախապատրաստման համար, ապա նշանակվում է ողջամիտ ժամկետներ, որոնց ընթացքում պետք է իրականացվեն այդ լրացուցիչ միջոցները: Արբիտրաժային տրիբունալը նախագահողը կարող է Արբիտրաժային դատարանին դիմել գործի նախապատրաստման և վարույթի անցկացման հետ կապված որոշակի գործողությունների իրականացման խնդրանքով:

#### **17. Բանավոր քննություն**

Հայցադիմումի պատասխանը կամ հակընդդեմ հայցադիմում ներկայացվելու դեպքում հակընդդեմ հայցադիմումի պատասխանը Արբիտրաժային դատարանի կողմից ստանալուց կամ հայցադիմումի պատասխանի կամ հակընդդեմ հայցադիմումի պատասխանի ներկայացման համար Կանոնակարգով սահմանված ժամկետը լրանալուց հետո անց են կացվում բանավոր լուսմներ: Բանավոր քննության առաջին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին կողմերը տեղեկանում են ծանուցագրերով, որոնք կողմերին պետք է ուղարկվեն այնպիսի հաշվարկով, որ յուրաքանչյուր կողմը, ծանուցագիրը ստանալուց հետո, իր տնօրինության տակ ունենա ոչ պակաս տասը օր՝ բանավոր լուսմներին պատրաստվելու և ներկայանալու համար: Կողմերի համաձայնությամբ այդ ժամկետը կարող է կրճատվել: Քննությունն անց է կացվում դռնփակ: Արբիտրաժային տրիբունալի թույլտվությամբ և կողմերի համաձայնությամբ գործի քննությանը կարող են ներկա գտնվել արբիտրաժային վարույթին չմասնակցող անձինք: Եթե արբիտրաժային վարույթի ընթացքում արբիտրներից մեկը փոխարինվում է, ապա նոր ձևավորված արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում, թե անհրաժեշտ է արդյոք կրկնել նախորդ նիստերը և եթե անհրաժեշտ է, ապա՝ ամբողջությամբ, թե մասամբ: Հետագա բանավոր քննության նիստերի անցկացման անհրաժեշտության դեպքում դրանց անցկացման ժամկետը նշանակվում է արբիտրաժային տրիբունալի կողմից՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, որի վերաբերյալ կողմերը ծանուցվում են տեղում՝ համապատասխան ստորագրությամբ, կամ Կանոնակարգով սահմանված կարգով:

#### **18. Բանավոր քննության նիստի արձանագրումը**

Բանավոր քննության նիստ անցկացնելիս վարվում է արձանագրություն: Բանավոր քննության նիստի արձանագրությունը վարում է Արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարը: Բանավոր քննության նիստի արձանագրությունը վարվում է գրավոր կամ համակարգչի միջոցով: Այն գործի նյութերին կցվում է նախագահող արբիտրի, և Արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարի ստորագրությամբ: Համակարգչի միջոցով կատարված արձանագրությունը գործի նյութերին կցվում է լազերային կրիչի տեսքով:

#### **19. Բանավոր քննության արձանագրությունը**

Գործի բանավոր քննության վերաբերյալ Կանոնակարգի 17 գլխով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն, որը պետք է պարունակի. Արբիտրաժային դատարանի անվանումը, գործի համարը, քննության վայրը և ամսաթիվը, կողմերի անունները (անվանումները), տեղեկություններ գործի քննությանը կողմերի ներկայացուցիչների մասնակցության մասին, արբիտրների, վկաների, փորձագետների, թարգմանիչների և քննության այլ մասնակիցների անուններն ու ազգանունները, քննության ընթացքի կրճատ նկարագրումը, կողմերի պահանջները և կողմերի այլ կարևոր հայտարարությունների շարադրումը, նշումներ գործի քննության հետաձգման կամ ավարտման հիմքերի վերաբերյալ, արբիտրների ստորագրությունները: Կողմերն իրավունք ունեն ծանոթանալ արձանագրության բովանդակությանը: Կողմի միջնորդությամբ արբիտրաժային տրիբունալի որոշմամբ արձանագրության մեջ կարող են մտցվել փոփոխություններ կամ լրացումներ, եթե կողմի միջնորդությունը համարվի հիմնավոր: Իր խնդրանքով կողմը ստանում է արձանագրության պատճենը:

#### **20. Կողմերի մասնակցությունը**

Կողմերը կարող են իրենց գործերը վարել անմիջականորեն (անձամբ) կամ պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով: Գործի քննության ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված կողմի չներկայանալն արգելք չէ վարույթի իրականացման և գործով վճռի կայացման համար, բացառությամբ, երբ չներկայացած կողմը գրավոր ձևով ներկայացրել է միջնորդություն հարգելի պատճառով գործի քննությունը հետաձգելու համար: Կողմը կարող է պատշաճ ձևակերպված գրավոր միջնորդություն ներկայացնել գործն իր բացակայությամբ՝ գործում առկա փաստաթղթերի հիման վրա քննելու վերաբերյալ:

#### **21. Հայցի ապահովման միջոցները**

Արբիտրաժային տրիբունալը կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել հայցի ապահովման այնպիսի միջոցներ կիրառելու վերաբերյալ, որոնք նա գտնի անհրաժեշտ՝ հաշվի առնելով վեճի առարկան: Արբիտրաժային տրիբունալը կարող է ցանկացած կողմից պահանջել տրամադրել ձեռնարկվող միջոցներին համապատասխանող ապահովում՝ հայցի ապահովման միջոցների կիրառմամբ մյուս կողմին պատճառվելիք հնարավոր վնասների կանխման կամ հատուցման նպատակով: Կանոնակարգի 21.1 կետում նախատեսված որոշումներն անրագրվում են միջանկյալ վճիռների ձևով:

#### **22. Գործի վարույթը գրավոր նյութերի հիման վրա**

Կողմերը կարող են պայմանավորվել վեճը միայն գրավոր նյութերի հիման վրա քննելու վերաբերյալ, առանց բանավոր քննության անցկացման: Արբիտրաժային տրիբունալը կարող է իր հայեցողությամբ նշանակել նաև բանավոր լսումներ, եթե ներկայացված նյութերը բավարար չեն վեճն ըստ էության լուծելու համար:

#### **23. Ապացույցները**

Կողմերը պարտավոր են ապացուցել իրենց պահանջների կամ առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Արբիտրաժային տրիբունալը կարող է կողմերից պահանջել ներկայացնել նաև այլ ապացույցներ: Արբիտրաժային տրիբունալն իրավասու է նաև իր հայեցողությամբ փորձաքննություն նշանակել և դիմել երրորդ անձանց՝ ապացույցներ ներկայացնելու համար, ինչպես նաև հրավիրել և լսել վկաների: Կողմը պարտավոր է ներկայացնել գրավոր ապացույցների բնօրինակները կամ դրա պատշաճ վավերացված պատճենները: Գործի քննության շահերից ելնելով արբիտրաժային տրիբունալն իրավասու է պահանջել նշված ապացույցների թարգմանությունն այլ լեզվով: Ապացույցների ստուգումը (ուսումնասիրությունը, գնումը) իրականացվում է արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված եղանակով: Ապացույցների գնահատումը արբիտրների կողմից իրականացվում է իրենց ներքին համոզմամբ: Կողմի՝ անհրաժեշտ ապացույցներ չտրամադրելը չի խոչընդոտում արբիտրաժային տրիբունալին շարունակել վարույթը և վճիռ կայացնել իր տրամադրության տակ եղած ապացույցների հիման վրա:

#### **24. Երրորդ անձանց մասնակցությունը**

Երրորդ անձի ներգրավվումը արբիտրաժային վարույթին թույլատրվում է միայն վիճող կողմերի համաձայնությամբ: Երրորդ անձին վարույթ ներգրավելու համար, կողմերի համաձայնությունից բացի, պահանջվում է նաև ներգրավվող անձի համաձայնությունը: Երրորդ անձին ներգրավելու համաձայնությունը պետք է կայացվի գրավոր:

#### **25. Քննության հետաձգումը և վարույթի կասեցումը**

Անհրաժեշտության դեպքում, կողմերի գրավոր համաձայնությամբ, գործի քննությունը կարող է հետաձգվել կամ վարույթը կարող է կասեցվել: Գործի քննության հետաձգման կամ արբիտրաժային վարույթի կասեցման վերաբերյալ կայացվում է որոշում:

#### **26. Վերջնական արբիտրաժային վճիռ**

Արբիտրաժային վարույթն ավարտվում է վերջնական արբիտրաժային վճռի կայացմամբ:

#### **27. Վճռի կայացումը**

Այն բանից հետո, երբ արբիտրաժային տրիբունալը կհամարի, որ վեճի հետ կապված բոլոր հանգամանքները բավականաչափ բացահայտված են, նա ավարտված է հայտարարում գործի բանավոր քննությունը և ձեռնամուխ է լինում արբիտրաժային վճռի կայացմանը: Վճիռը կայացվում է դռնիակ խորհրդակցությամբ՝ արբիտրաժային տրիբունալի ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե վճիռը հնարավոր չէ կայացնել ձայների պարզ մեծամասնությամբ, ապա այն կայացվում է արբիտրաժային տրիբունալը նախագահողի կողմից: Արբիտրաժային վճիռը ստորագրվում է արբիտրաժային տրիբունալի բոլոր անդամների կողմից: Արբիտրը, որը համաձայն չէ վճռի հետ, կարող է գրավոր կերպով ներկայացնել իր հատուկ կարծիքը, որը կցվում է վճռին:

#### **28. Վճռի հրապարակումը**

Գործի գրավոր և/կամ բանավոր քննության ավարտից հետո տասնհինգօրյա ժամկետում հրապարակվում է արբիտրաժային տրիբունալի վճիռը: Արբիտրաժային տրիբունալի վճիռը հրապարակվելուց անմիջապես հետո հանձնվում է կողմերին, իսկ նրանց բացակայության դեպքում երկօրյա ժամկետում ուղարկվում է վերջիններին: Արբիտրաժային տրիբունալը կարող է անցկացնել լրացուցիչ քննություն, եթե դա բխում է վեճի ճիշտ լուծման շահերից և վճիռը դեռևս չի հրապարակվել: Արբիտրաժային դատարանն անհրաժեշտության դեպքում մինչև տասը օրով կարող է երկարացնել Կանոնակարգի 28.1 կետով սահմանված ժամկետը:

#### **29. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը**

Վճիռը պետք է կայացվի գրավոր: Վճռում պետք է նշվի:

- Արբիտրաժային դատարանի անվանումը,
- գործի համարը,
- վճռի կայացման ամսաթիվը և վայրը,
- արբիտրների անունները և ազգանունները,
- վիճող կողմերի և արբիտրաժի վարույթին մասնակցող այլ անձանց անվանումները,
- վեճի առարկան և գործի հանգամանքների կրճատ նկարագրությունը և պատճառաբանությունները, որոնց վրա հիմնված է վճիռը, բացառությամբ, երբ կողմերը համաձայնվել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում, կամ եթե կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ,
- հայցային պահանջների բավարարման կամ մերժման եզրահանգումները,
- գործով արբիտրաժային ծախսերի և հավաքագրումների գումարները, դրանց բաշխումը կողմերի միջև,
- արբիտրների ստորագրությունները:

Արբիտրաժային վճիռը պետք է ստորագրվի տրիբունալի բոլոր անդամների կողմից: Եթե արբիտրներից որևէ մեկը չի կարողանում ստորագրել արբիտրաժային վճիռը՝ արբիտրաժային տրիբունալը նախագահողը վավերացնում է այն իր ստորագրությամբ՝ նշելով արբիտրի ստորագրության բացակայության պատճառները:

### 30. Վճռի ուղղումը, պարզաբանումը և լրացումը

Ցանկացած կողմ, տեղեկացնելով մյուսին, կարող է արբիտրաժային վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին՝ խնդրելով ուղղել վճռում առկա հաշվարկներում թույլ տրված սխալները և/կամ վրիպակները: Արբիտրաժային տրիբունալը կողմի դիմումը հիմնավոր գտնելու դեպքում այն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կատարում է համապատասխան ուղղումներ կամ տալիս պարզաբանումներ: Նման ուղղումներ կարող են կատարվել նաև արբիտրաժային տրիբունալի կողմից սեփական նախաձեռնությամբ՝ երեսուցյա ժամկետում, հաշված վճիռը կողմերին ուղարկելու օրվանից: Կողմերից յուրաքանչյուրը, տեղեկացնելով մյուս կողմին, արբիտրաժային վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կարող է դիմել արբիտրաժային տրիբունալին՝ վճռի որևէ կոնկրետ կետ կամ մաս պարզաբանելու համար: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր է համարում այդպիսի դիմումը, ապա դրա ստացումից հետո երեսուն օրվա ընթացքում տալիս է անհրաժեշտ պարզաբանումներ: Կողմերից յուրաքանչյուրը, մյուս կողմին տեղյակ պահելով, կարող է արբիտրաժային վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին կայացնելու լրացուցիչ վճիռ այն պահանջների վերաբերյալ, որոնք պատշաճ կերպով ներկայացվել են արբիտրաժային վարույթում, սակայն վճռում չեն արտացոլվել: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր համարի այդ դիմումը, ապա պարտավոր է այն ստանալուց հետո վաթսուցյա ժամկետում կայացնել լրացուցիչ վճիռ: Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալը կարող է երկարաձգել Կանոնակարգի 30-րդ գլխում նշված ժամկետները: Վճիռների ուղղման և պարզաբանման մասին որոշումները, ինչպես նաև լրացուցիչ վճիռը հանդիսանում են արբիտրաժային վճռի բաղկացուցիչ մաս:

### 31. Հաշտության համաձայնություն

Եթե արբիտրաժային վարույթի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային տրիբունալը առարկությունների բացակայության դեպքում համաձայնեցված պայմաններում կայացնում է վճիռ՝ հաստատելով կողմերի կնքած հաշտության համաձայնությունը: Կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում, արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է պարունակի հաշտության համաձայնության բառացի շարադրանք:

### 32. Վճռի կատարումը

Արբիտրաժային տրիբունալի վճիռները կողմերը կատարում են կամավոր՝ վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է անհապաղ կատարման: Նշված ժամկետում կամավոր չկատարված վճիռները ի կատար են ածվում Օրենքին և միջազգային պայմանագրերին համապատասխան:

### 33. Վարույթի ավարտը առանց վճռի կայացման

Եթե գործով վերջնական վճիռ չի կայացվում, ապա արբիտրաժային վարույթը ավարտվում է վարույթն ավարտելու մասին որոշման կայացմամբ: Վարույթի ավարտման մասին որոշումը կայացվում է, հայցվորի կողմից պահանջից հրաժարվելու դեպքում, բացառությամբ եթե պատասխանողն այդ մասին ծանուցում ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում առարկում է գործի վարույթի ավարտման դեմ և Արբիտրաժային դատարանը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը ճանաչում է պատասխանողի օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում, կողմերի միջև արբիտրաժային վարույթի դադարեցման վերաբերյալ պայմանավորվածության դեպքում, Արբիտրաժային դատարանը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը գտնում է, որ վարույթի շարունակումը ինչ-ինչ պատճառներով դարձել է ավելորդ կամ անհնարին, մասնա-վորապես, երբ բացակայում են գործի քննության և վեճն ըստ էության լուծելու համար անհրաժեշտ նախադրյալները: Կանոնակարգի 33.2 կետով նախատեսված հիմքերով արբիտրաժային վարույթի դադարեցման դեպքերում արբիտրաժային ծախսերի վճարումները և դրանց հետ վերադարձը կատարվում են Կանոնակարգի թիվ 1 հավելվածով սահմանված կարգով: Արբիտրաժային վարույթն ավարտելու մասին որոշումը կայացնում է Արբիտրաժային դատարանը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը:



Հավելված. Կ Ա Ր Գ ԱՐԲԻՏՐԱԺԱՑԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ՀՀ Առևտրաարդյունաբերական Պալատին կից մշտապես գործող  
Արբիտրաժային Դատարան**

**Լուսանկարներ**

**Հեռ:** +37410 52-89-59  
+37410 53-26-54  
**Ֆաքս:** +37410 58-78-71

**Էլ. փոստ:** [info@arbitrage.am](mailto:info@arbitrage.am)  
**Վեբ կայք:** [www.arbitrage.am](http://www.arbitrage.am)



Կայքի հեղինակ "Վերեքս Թեքնոլոջիս" ՍՊԸ